Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-0 NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՄՆՋՈՅԵԱՆԻ

591.99
Մ-91

ԵԱՇԻՓԻԴԱՆ

(Շիբակի հէքիաթներից մէկը)

35651

Գրի առաւ

Ե. ՄՈՎՍԻՍԵԱՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գ. Մ. Սանոյեանցի

Типографія К. Саноянца, въ Александрополѣ.

1901

04.07.2013

4482

Дозволено Цензурою. Тифлисъ, 1 Мая 1900 г.

ԵԼՈՒ ՓԻԴԱՆ

Ա.



Հին ժամանակներում ապրում էր մի թագաւոր։ Երկնքի աստղերին թիւ ու համար կար, այս թագաւորի հարստութեան, քաղաքներին ու գանձերին հաշիւ չկար։ Նա սիրում էր ժողովրդին և սիրւած էր նրանից։ Ամեն մի հրաման, ամեն մի թագաւորի պատւէրը կատարում էր ժողովուրդը առանց դժւարանալու, առանց դժգոհութիւն յայտնելու։ Չընայելով սրան՝ թագաւորը կանչում է մի օր իր վէզիրին և ասում. «Քանի որ ջահիլ էի, ժողովուրդս ամենայն սրբութեամբ կատարում էր բոլոր պատւէրներս և սիրով վերաբերւում դէպի ինձ, այժմ ծերացել եմ և կարծում եմ, որ բախտս էլ ծերացել է ինձ հետ, ուստի ուզում եմ փորձել, թէ

արդեօք իմ ժողովուրդը սիրում է ինձ այնպէս, ինչպէս Ջահիլ ժամանակս։ Այսօր մունետիկ գցել տուր մայրաքաղաքիս փողոցները և նրա բերանով յայտարարիր համայն ժողովրդին հետեւեալը. «Թագաւորին սիրողը այս երեկոյ իր տանը կրակ չըվառէ. արևը մայր մտնելուն պէս՝ իր գիշերային պատրաստութիւնը տեսնի, ընթրիքն ա՛է և առանց ճրագլուսի՝ պատրաստի քնելու»։

Պաուէրը կատարուած էր։ Երբ գիշերային խաւարը տիրեց երկրին, Թագաւորը նորից կանչեց վէզիրին և նրա հետ գերվիշի շորեր հագած՝ դուրս եկաւ փողոց անձամբ ստուգելու փորձը։ Խաւարը և խորին լռութիւնը տիրում էր շորս կողմը։ Կարծես քաղաքը սուգ էր մտել և զգեստաւորուել ոտից մինչև գլուխ բնութեան սև քողով։ Ծպտեալ Թագաւորը և վէզիրը շատ մարդ եկան, շատ աչք մարդ ածեցին այս կողմ, այն կողմ, բայց ոչ մի տեղ կրակի հետք չընշմարեցին։ Պաուէրը ճըշտութեամբ կատարուած տեսնելով, նրանք կամենում էին վերադառնալ արքունիք, բայց ահա՛ ինչ-որ մի ստորերկրեայ, գետնափոր խրճիթի ցածլիկ լուսամուտներից նշմարուեցաւ մի աղօտ լոյս։

—Ես չէ՞ ասում, որ իմ բախտը ծերացած կըլինի ինձ հետ և ժողովուրդը իմ պաուէրս այնպէս չի կատարել, ինչպէս Ջահիլ ժամանակս էր կատարում, չընչայ Թագաւորը վէզիրի ականջին և քայլերը ուղղեց դէպի գետնափոր խրճիթը։

Գահ-կարասիքից զուրկ, աղքատ խրճիթի ներսը փայլփլելով վառում էր ճրագը՝ աղօտ լոյս սփռելով իր շուրջը։ Խրճիթի մի կողմը հենուած էր արևելեան ճաշակով մի փառաւոր խալիչայ, որի առաջ նստած էին երեք մատաղահաս օրիորդներ և իրանց ճարպիկ

մատներովն գործում էին ամենայն արագութեամբ։ Հմուտ մատների շարժումը և անդադար մկուքի թրփթփոցը չէր խանգարում նրանց քաղցը զրոյցներ անելու։ Թագաւորը այս տեսարանով հետաքրքրուած, ականջը դէմ արեց գետնահաւասար լուսամուտի փեղկին և սկսեց ամենայն ուշադրութեամբ լսել նրանց խօսակցութիւնը։

Օրիորդներից անդրանիկն ասաց. «Աղջիկներ, Թագաւորն որ ինձ առնի, այնպիսի մի խալիչայ կըգործեմ, որ բոլոր իր արքունականներով նստի վրան, դեռ խալիչայի մի կողմը ծալած մնայ։

Միջակն ասաց. «Թագաւորն որ ինձ առնի, այնպիսի մի վրան կըգործեմ, որ իր զօրքով ամբողջովին մտնի վրանը, բայց էլի մի կողմը դատարկ մնայ»։

Փոքրն ասաց. «Հէ, ես ինչ պարծենամ. ոչ այն կարող եմ անել և ոչ այն. Թագաւորն որ ինձ առնի, Աստծոյ ամենակարող զօրութիւնով այնպիսի մի ոսկէ մաղաւոր տղայ և ոսկէ մաղաւոր աղջիկ կըբերեմ, որ արեգակին կ'ասեն. —Արև, դու մի դուրս գայ, որ մենք ենք դուրս գալու»։

Թագաւորն այս խօսքերը լսելուն պէս՝ հրամայեց վէզիրին նշնել խրճիթի դուռը և շտապով հեռանալ։

Հետևեալ առաւօտը կանչեցաւ օրիորդների հայրը և ներկայացաւ Թագաւորին։ Գլուխը կոր, աչքերը դէպ գետին խոնարհած՝ կանգնել էր նա Թագաւորի առաջին և սրտատրոփ սպասում իր դատավճռին։

—Ա՛յ մարդ, դու քանի գլխու տէր ես, որ իմ պաուէրիս հակառակ, քո տանը այս երեկոյ կրակ էիր վառել, խօսեց Թագաւորը։

—Տէր իմ, Թոյլ տուր երկու խօսք ասելու, հաղիւ

լսելի ձայնով արտասանեց պարտադանցը։

—Խոսիր։

—Ես մի քիւրդ բէկի պարտապան եմ։ Այս գիշեր նրա աղջկան հարս էին տանում։ Նա եկաւ իմ մօտ և պատւիրեց որ իր աղջկայ օժիտի համար հարկաւոր է մի խալիչայ. եթէ մինչև առաւօտ կարողացան իմ աղջիկները այդ խալիչան պատրաստել՝ լաւ, իսկ եթէ ոչ՝ նա պարտքի տեղ կըտանի իմ աղջիկներից նրան, որին որ հաւանի։ Այդ պատճառով ես էլ լաւ համարեցի, որ իմ գլուխը Թագաւորի դահճի սրին զոհ գնայ, քան թէ քիւրդ բէկը իմ աղջիկը յափշտակէ, և ը պատւիրին հակառակ գնալով, պատւիրեցի աղջիկներիս պատրաստել խալիչան։

—Լաւ, եթէ ես ը յանցանքը ներեմ, ը աղջիկներից մեծը՝ վէզիրիս, միջակը նէզիրիս և փոքրը՝ ինձ կնութեան կըտաս, ասաց Թագաւորը։

Խոսակիցը չհաւատալով իր ականջներին, որ այդ պիսի խոսքեր Թագաւորի բերանից է լսում, կիսազարմացական և կիսահարցական նայւածքով սպասողական դիրք էր բռնել։

—Ա՛յ մարդ, խոսիր, է, ինչ ես պէլացել. կըտաս ը աղջիկներից մեծը՝ վէզիրիս, միջակը՝ նէզիրիս և փոքրը՝ ինձ կնութեան, կրկնեց Թագաւորը իր հարցը։

—Տէր իմ, փոխանակ ծաղրելու, պատժիր ինձ, ինչպէս կամենաս։

—Չէ, հաւատա՛ ինձ, որ անկեղծ սրտից են բըղխում այս խոսքերը և 'ի նշան դրա, տուր ինձ ձեռդ. ասաց Թագաւորը և սեղմեց իր երկու ափի մէջ խոսակցի աջ ձեռը, որ բարեկամութեան նշան է համարւում։

—Աա՛, խոսք տալիս ես, կըտաս։

—Տէր իմ, ը կամքն է։

—Չէ, ը կամքն է։

—Չէ, ը կամքն էլ պիտի լինի։

Երբ ը ցանկութիւնն է, ես ինչ կարող եմ, որ կամք չըտամ։

—Ուրեմն համաձայն ես։

—Այո, կիսաձայն պատասխանեց Թագաւորի անները։

Բ.

Օթ օր շարունակ ամբողջ քաղաքը հրավառութեան մէջ է։ Եօթը կարգ [illegible] շարունակ ածելուց մարդու ականջները տժժում են։ —Հարսանիքն է Թագաւորի, վէզիրի և նէզիրի։ Ամեն մարդ ուրախ է, ամեն ոք քէֆ է անում։ Խնջոյքը հասարակաց է. ամենքն էլ մասնակցում են ուրախութեան։

Հարսանիքը վերջացաւ։ Սահում են ամիսները միմեանց յետևից, սակայն ոչ վէզիրի կինն է իր խոստումը կատարել՝ խոստացեալ խալիչան գործել, և ոչ նէզիրի կինը—վրանը։ Բայց օր աւուր բարձրանում է Թագուհու գոգնոցը և Թագաւորին ցանկալի ժամը մօտենում։ Այդ նկատում են Թագուհու մեծ քոյրերը, բայց նրանց համար այնքան տխրալի է այդ ժամը, որքան ուրախալի Թագաւորի համար։ Իրանք չկարողացան կատարել տուած խոստումները, ինչ կըլինի նրանց հալը, եթէ փոքրը քրոջ ասածը կատարի. այնուհետև ինչ ե-

բեսով նրանք ներկայանան թագաւորին։ Նախանձը կրծում էր նրանց սիրտը և օր ըստ օրէ լցնում, աւելցնում նրա խորշում իր թոյնը։ Երկու իշխանուհիները միանում են, խելք խելքի տալիս, և երկար ու բարակ մտածում, թէ ինչպէս ազատուեն կասկածաւոր ապագայից։ Նրանք կանչում են իրանց խորհրդի մի ջադուքեար (կախարդ) պառաւ, յայտնում նրան իրանց դարդը և դարմանի խորհուրդ հարցնում։

—Դուք բոլորովին անհոգ եղէք. գործը գլուխ բերելն իմ բանս է, միամտացնում է իշխանուհիներին պառաւը և շորշրուկ բռունցքի մէջ սեղմում նրանց տուած ոսկիները, համոզուած լինելով, որ էլի մի բուռն ոսկի կը ստանայ, եթէ գործը յաջող ելք ունենայ։

Այնուհետև ջադուքեարը սկսում է իր երկերեսութիւնը արքունիք։ Սկզբում ծանօթանում է թագուհու ազախինների հետ։ Իր քաղցրախօս լեզուով, ցոյց տուած բարի դէմքով, անշահասէր բնաւորութեամբ և խորին գիտութիւնով ամեն կերպ աշխատում է նրանց սիրտը գրաւել։ Ի՞նչպիսի զարմալի առակներ, առածներ ասես, որ չի պատմում նա ազախիններին։ Ցայտնում է նրանց բնութեան գաղտնիքները, խրատ է տալիս թէ ինչ վերքի ինչ ծաղիկ կարող է դեղ լինել, թէ ինչպէս պէտք է պաշտպանուել չարերից և դևերից, ինչպէս պէտք է թալիսմաններ պատրաստել, ուրիշի սէրը գրաւել և այլն և այլն, և եթէ այդ բոլորի փոխարէն առաջարկում է ազախինների կողմից մի քանի կոպէկ փող, նա հրաժարուելով հրաժարւում է՝ ասելով որ ինքը հոգու խաթեր է այդ բոլորը սովորեցնում, իր մայրական պարտքն է համարում այդ. փողի կարօտութիւն չունի։

Ջուտով այս անշահասէր, բարի և գիտնական պառաւի համբաւը հասաւ թագուհուն։

Ինչու՞ չունենալ այդպիսի մի բարի, գիտնական խորհրդատու և չլվայելել նրա տուած մայրական խրատները. ապա այն զարմալի առակներն ու առածները, որ պատմում է նա իր քաղցրախօս լեզուով—մտածում էր այսպէս մատաղահաս թագուհին համբաւաւոր պառաւի հետ տեսակցելուց յետոյ։

Մտածածը որոշուած էր։ Այնուհետև ջադուքեար պառաւի առաջ ամեն ժամանակ թագուհու պալատի դռները բաց էին։ Նա էր թագուհու խորհրդատուն և խրատողը։ Օր աւուր աւելանում էր թագուհու ունեցած հաւատը դէպի պառաւը, որն արդէն կիսով չափ հասած էր համարում իր նպատակին։

Մինչ այս, մինչ այն՝ թագուհու ծննդաբերութեան օրը մօտենում էր։ Ո՞վ պիտի լինէր տատմայը, եթէ ոչ ջադուքեար պառաւը. ո՞վ էր ցոյց տուել այնքան մայրական գութ և խնամք թագուհուն, եթէ ոչ նա. վերջապէս ո՞ւմ էր այնքան հաւատ ընծայում թագուհին, եթէ ոչ այդ պառաւին։ Ահա թէ ինչու իր ցաւն զգալուն պէս՝ թագուհին կանչեց պառաւին, հրամայեց բոլոր ազախիններին դուրս գնալ և առանձին թողնել իրան պառաւի հետ։ Պառաւն էլ այդ էր ուզում, իր նպատակի իրագործումն հէնց դրա մէջ տեսնում։

Թագաժառանգ մանկան լոյս աշխարհ գալուն պէս թագուհու սենեակը մի առանձին փայլ ստացաւ նրա ոսկեզանգուր մազերից։ Նրա իւրաքանչիւր մի աչքը մի մի ակն էր, իսկ դէմքը տասնըհինգօրեայ լուսնի էր նմանում, և իրաւ որ կարող էր ասել. Ես, դու՝ դու՝ դու՝ գալ, ես էմ դու՝ դու գալու։

Մինչ թագուհին իր ցաւից ճնշուած՝ չէր իմանում,

թէ ինչ է կատարւում իր շուրջը, խորամանկ պառաւը փաթաթեց նորածին մանկանը շորերով, դրեց արկղի մէջ և լուսամուտից գցեց գետակը, որ հոսում էր պալատի տակից, ապա իր կապոցի միջից հանեց մի շան լակոտ, փաթաթեց թագաւորավայել շորերով և մանկան փոխարէն դրեց թագուհու մօտ։

Թագաւորը լսելով թագուհու որդի ծնելը, անդադար անց ու դարձ էր անում իր սենեակում և անհամբեր սպասում աւետաբերին. սակայն երկար սպասելուց յետոյ՝ համբերութիւնից դուրս գալով, կանչեց պառաւին և ասաց.

— Պառաւ, սպասելով աչքերս ջուր կարեցին, ուր է քո աւետաբերը. ասա, ինչպէս եղաւ։

—Տէր իմ, ասելու բան չէ, ինչ ասեմ, պատասխանեց պառաւը։

— Ի՞նչ է եղել. չլինի թագուհուն բան է պատահել։

— Չէ, տէր իմ, թագուհին ողջ և առողջ, հանգիստ պառկած է անկողնում։

— Ապա ինչ, նորածին մանուկն է վնասել. ասա՛ շուտով, ինչ ես լռել։

—Ոչ, տէր իմ, և ոչ էլ նա։

—Ապա ինչ է պատահել, ասա՛։

—Լեզուս կարկամում է, բերանս կապւում, տէր իմ, ինչպէս ասեմ, խօսեց պառաւը թագաւորի ոտներն ընկնելով, մի ոտս գերեզմանի մէջ է՝ միւսը դուրսը. ինչսուն տարին անց եմ կացրել՝ հարիւրին եմ գնում, բայց այսպիսի բան ոչ տեսել եմ և ոչ լսել։ Զարմանքից մազերս գլխիս բիզ-բիզ են եղել։ Չեմ կարող լեզուով պատմել, լեզուս պապանձում է. լաւ է, որ դաս և քո բարի աչքով տեսնես։

Բարկացած թագաւորն այլ ևս ոչինչ չըհարցրեց. քայլերն ուղղեց դէպի թագուհու սենեակը, բաց արաւ դուռը և ի՞նչ—թագուհին անզգայ վայր է ընկած անկողնում և մօտին թանկագին շորերի մէջ փաթաթած վնկստում է մի շան լակոտ։

— Ահա, տէր իմ, նորածին տղան, ասաց պառաւը, որ որսկան շան նման լեզուն դուրս գցած գնում էր թագաւորի յետևից և նրա ամեն մի շարժումը տեսնում։

Թագաւորը մատը կծեց։ Նրա բարկութեան չափ չըկար։ Ցուսախաբութիւնը այն աստիճան վատ ներգործեց վրան, որ ոչ մի խօսք չըկարողացաւ արտասանել, այլ միայն նշանացի արաւ պառաւին շտապով կորցնել շան լակոտը։

Գ.

ողնենք թագաւորին բարկութեան մէջ և հետևենք նորածին մանկան վիճակին։ Գետակն ընդունելով իր մէջ արկղը հանեց քաղաքից դուրս և խփելով այս ափին, այն ափին, քորելով ժայռերի կուրծքը, տարաւ, գցեց մի ջրաղացի առու։ Այս ջրաղացում ապրում էր մի ծեր մարդ իր պառաւ կնոջ հետ։ Նրանք ոչ մի որդի չունէին։ Երբ արկղը կանաչների երեսից սահելով եկաւ հասաւ ջրաղացի խողովակին և արգելեց ջրի ներս թափւելը, քարը կանգ առաւ. այդ նկատեց պառաւը և ասաց.

—Ա՛յ մարդ, մէկ տես էլի ինչո՞ւ քարը կանգնեց։

Մութն էր։ Ծերունին ձեռնափայտը քոթքոթացնելով, ճուրուրալով հասաւ առուի գլուխը, դուրս հանեց ջրից և քաշկռտելով մի կերպ գցեց ջրաղաց։

—Ա՛յ կնիկ, էս ծառի կոճղ է. լաւ վառելիք կըլինի. կացինը բեր՝ ճղճղեմ. էգուց գնենք արևկողը՝ չորանայ—պէտք կըգայ։

Հալեորն առաւ պառաւի ձեռից կացինը, տեղաւորեց արկղն ինչպէս հարկն է և երկու ձեռով վրայ բերեց կացինը մահաբեր հարուածը տալու. սակայն դողդոջուն ձեռները չըկարողացան ուղիղ նշան արած տեղը խփել և հարուածը բաժանեց արկղից նրա մի տախտակը՝ երևան բերելով չքնաղ մանկան, որ հանգիստ և անվրդով պարկած էր մահաբեր տնակում։ Նրա ոսկեգանգուր մազերը և լուսանման դէմքը մի դիւթական լուսով լուսաւորեցին ջրաղացը։ Պառաւը և ծերունին զարմանքից չէին իմանում ինչ անեն։

Նրանք մի առանձին երկիւղով և ակնածութեամբ մօտեցան մանկան, գրկեցին և համբերելով ատուածային մի պարգև իրանց ծերութիւնը մխիթարելու, որդեգրեցին նրան՝ անուանելով Նաշի Ֆիդան*), իր վայելուչ կազմածք ունենալու պատճառով։

Անցաւ էլի մի տարի։ Մօտենում է Թագուհու երկրորդ ծննդաբերութիւնը։ Քոյրերի սիրտը դարձեալ ճմլում է նախանձից։ Ջադուքեաը պառաւի գործն աջող է. աջից առնում է, ձախից առնում։ Նա կասկած էլ չունի, որ այս անգամ ևս Թագուհու տատմայրն ինքն է։ Արքայական զաղտնիքը միայն իրան է յայտնի, մինչ Թագաւորը կըբարեհաճի ուրիշ տատմայր հրաւիրել կասկածելի ծննդականին։

*) Դայեկադեղ

Հասաւ ժամանակը։ Թագուհին երկունքով բռնուած է։ Արքունիքը խորին լռութեան մէջ է։ Պասկածը, ընկճուած յոյսը և անհամբերութիւնը միացած տրորում, ճմլում են Թագաւորի սիրտը։ Նա էլ դադարում չունի. շարունակ սենեակի մէջ անց ու դարձ է անում և շուտ շուտ աչքերը սևեռում դէպի դուռը։

Վերջապէս բացուեց դուռը և գող կատուի նման պառաւի կասկածոտ աչքերը Թագաւորի աչքերին հանդիպեցան։

—Հը՛, ինչպէս եղաւ, պառաւ։

—Թագաւորն ապրած կենայ, ինչպէս որ առաջին անգամն էր, այժմ էլ այնպէս։

Այդ բոպէին Թագաւորի երեսին նայողը կըսարսափէր։ Նրա երեսի գոյնը սևացել, ածուխի էր նմանում, ամբողջ կուրծքը արագ արագ բարձրանում, իջնում էր, իսկ ձեռները դողդողում։ Շընչաւատալով լսածին, նա կամեցաւ աչքով տեսնել իրականութիւնը։ դիմեց Թագուհու սենեակը և ներս մտաւ։ Պառաւի ասածը ճիշտ էր. Թագաւորը բոլորովին նոյն դրութեան մէջ գտաւ Թագուհուն, ինչ որ առաջին անգամը—դարձեալ անդգայ վայր ընկած Թագուհին և մօտը մնկստող չան լակոտը։

Թագաւորի բարկութեան չափ չըկար։ Նա հրամայեց խսկոյն և եթ կորցնել չան լակոտը, իսկ այդ անդգամ կնոջը, որ համարձակութիւն էր ունեցել այդպէս չարաչար կերպով խաբելու իրան (Թագաւորին), տանել եօթը ճանապարհների խաչմերանում մի փոս փորել, մինչև ծծերը Թաղել նրան այդ փոսում, օրական կէս դարի հաց և մի աման ջուր տալ, և մի պահապան կանգնեցնել մօտը, որ հսկէ ամեն մի անց ու դարձ

անողի այդ ճանապարհներով՝ արհամարական կնոջ երեսին թքելու և մի մի արհամարական քար գցելու, այնքան՝ մինչև որ ահագին բլուրներ գոյանան նրա շուրջը։

*
* *

Բայց միթէ, իրաւ, թագուհուց ծնուածը չան լակոտ էր։ Ոչ. նա մի չքնաղատես աղջիկ էր, որ իր գեղեցկութեամբ գերազանցում էր հարազատ Եաշի-Ֆիդանի եղբօրը, և որ ենթարկուեցաւ նրա վիճակին—նոյնպիսի արկղը, նոյն գետակը, նոյն գետակից անջատուող առուն որ հիւր է տանում ջրաղացպանին այդ չքնաղ արարածները, և նոյն ջրաղացը։

Ահա ծերունի ջրաղացպանը հանել է առուից երկրորդ արկղը, դրել առաջին, այս ու այն կողմ դարձնում և ասում պառաւին.

—Այ կնիկ, էս ծառի կոճղ չէ, շատ նման է Եաշի-Ֆիդանիս արկղին. մի ուրագ բեր, զգուշութեամբ ճըղճղեմ այս, տեսնեմ ինչ բան է։

Պառաւը տուեց ուրագը մարդուն. սուր բերանն ուրագի զգուշութեամբ վրայ եկաւ արկղի մի տախտակին։ Մէկ, երկու, երեք՝ և ահա բաժանուեցաւ տախտակը արկղից։ Ո՜, աչք պէտք է, որ տեսնի, լեզու պէտք է, որ պատմէ եղելութիւնը.—արկղում քրտնաթոր պառկած է մի հրեշտականման արարած. ոչ կե՞ր, ոչ խմէ՞, կանգնիր, դրա երեսին մտիկ տուր և օրանչացիր։ Թէ Եաշի-Ֆիդանի ժամանակ միայն փայլ առան ջրաղացի պատերը, այժմ ամբողջ ջրաղացը վառվռում էր չքնաղ մանկան լուսով. իսկ ջրաղացքարը իր արագ-արագ պտտուտումով, թըրխկ ու շըրխկոցով ձայնակցում էր ջրի

գոչումի հետ և կարծես երգում ու շնորհաւորում լուսատու մանկան գալուստը։ Հալեորն ու պառաւը չէին կարողանում ուշքի գալ, թէ ինչ պատահեց իրանց հետ. նայում էին ոսկեգանգուր չքնաղ մանկան վրայ և չէին կշտանում նրա աննման դէմքը դիտելուց։

Երբ փոքր ինչ խելքի եկան, միասին ծունկ չոքեցին, արտասուաթոր աչքերն երկինք բարձրացրին և միաբերան ասացին. «Փառք Քեզ, Տէր-Ստեղծող, որ ողորմեցար մեզ և մեր ծերութեան հասակում ուղարկեցիր այս աննման արարածները վերջին օրերս մխիթարելու»։

Նրանք վեր առան հրաշալի աղջկանը, որդեգրեցին իրանց և Նուռու-Գիւղալ*) անունը տուին։

Դ.

Ահում են ժամեր։ Լուսն ու մութը յաջորդելով միմեանց կազմում են օրեր, կլորում տարին։ Գլորւում են տարիներ փոփոխելով իրանց հետ մարդկային կեանքը։ Եաշի-Ֆիդանը և Նուռու-Գիւղալը արդէն ոտն են ելել։ Նրանք առանց պատերը բռնելու կարողանում են քայլել և առանց դժուարանալու շէմքից անցնել, դուրս ու ներս անել։ Ջրաղացի շրջակայքը տարածւում են զեղածիծաղ մարգագետիններ, զարդարւած հազար ու մի տեսակ ծաղիկներով և կանաչներով։ Այդ մարգագետիններում թռչկոտում են ծաղկից ծաղիկ չանասէր մեղուները և խայտաբղէտ թիթեռնիկները։ Նրանց հետ

*) Լուսագեղ

մասնակցում են իրանց խաղերով թիթեռնիկներից ոչ պակաս անհոգ Եաշի-Ֆիդանն ու Նուռու-Գիւզալը։ Նրանց մանկական թոթովանքի և արծաթահնչիւն ձայների հետ խառնւում է ուռենիների վրայի ծաղերի ծլրլրոցը. իսկ այդ բոլորի հետ ձայնակցում կարկաչուն առւակը իր հեզիկ մրմնջով և երբեմն բարկացկոտ քչքչոցով։ Մեղմաշունչ զեփիւռը սիրային ցոյցով շոյում, տարուբերում է անմման արարածների ոսկեգանգուր մազերը և ալիքանման խաղացնում ու ծածանում անուշահոտ ծաղիկները։ Այդ բոլորը նկատում են բարի ծերունիները և անդադար փառք տալիս Արարչին, որ այդպիսի եղեմ է ստեղծել և նրա մէջ իր աստուածային պատկերի ներկայացուցիչներ դրել։

—Ա՜յ մարդ, ինչու՞ ենք պահել այն ոսկով լի քըսակը,—ասում է պառաւը մարդուն,—և չենք կարել տալիս գեղեցիկ շորեր մեր հոգեղաւակներին։

—Ճշմարիտ ես ասում, կնիկ, ինչու՞ է պէտք մեր դառն աշխատանքի պտուղը, եթէ չենք գործադրում այն մեր գառնուկների համար։ Ես վաղը կըգնամ քաղաք և գեղեցիկ շորեր կըգնեմ ձագուկներիս։

Երբ Եաշի-Ֆիդանը լսեց պապի (այսպէս էին անուանում քոյը և եղբայր ծերունուն) վճիռը, թոթովեց քաղցրախօս լեզուով.

—Պապի, ես էլ կըգամ քաղաք։

—Չէ, ձագուկս, դու փոքր ես՝ կըդադրես ճանապարհին։

—Չէ, չեմ դադրիլ. Նուռու-Գիւզալի հետ վազում, գնում ենք, տե՛ս, էն կանաչների մէջը. չեմ դադրում։

—Այդ կանանչները մօտ են. բայց քաղաքը հեռու է՝ կըդադրես։

—Չեմ դադրիլ. կըգամ, ասաց Եաշի-Ֆիդանն և լաց եղաւ։

—Ինչու՞ ես լացացնում տղային, ասաց պառաւը, տար հետդ՝ հաղը քեզ էլ ընկեր է. ճանապարհին իրար հետ խօսելով կ'երթաք։ Երբեմն ձեռը բռնած քայլելով կըտանես, երբեմն կըշալակես դադրած ժամանակը, այդպիսով կամաց-կամաց տեղ կըհասնէք։

—Դէ լաւ, տանեմ,—ինչ ասեմ, որ չի լսում։

Հետևեալ առաւօտը Եաշի-Ֆիդանը և ծերունին ճանապարհ ընկան դէպի քաղաք։ Ամեն մի առարկայ, ամեն մի նոր բան հետաքրքրում և զարմանք էր պատճառում Եաշի-Ֆիդանին։ Ճանապարհին և թէ քաղաքում նա անդադար հարցեր էր թափում պապի գլխին, որոնց կիսատ-պռատ պատասխանում էր ծերունին, կամ անուշադիր թողնելով հարցը իր ուղին շարունակում։

Երբ իրանց գնելիքը վերջացրին և դուրս եկան քաղաքից, մի շարք երիտասարդների հանդիպեցին, որոնք նժոյգ ձիեր նստած ջիրիդ էին խաղում։

—Պապի, էն վրայի նստողները մեզ պէս մարդիկ են, հապա էն տակի շորս ոտանիներն ինչ են, հարցրաւ Եաշի-Ֆիդանը։

—Նրանք էլ ձիեր են, զաւակս, մարդիկ վրանները նստել, ջիրիդ են խաղում։

—Ես էլ ձի կ'ուզեմ։

—Այ որդի, այդ ձիերը թանկ են. իսկ իմ մօտիս փողը սպառւել է. ոբրեղից գնեմ քեզ համար ձի։

—Չէ՛, ինձ համար էլ ձի գնիր, ասաց Եաշի-Ֆիդանը և թաւալուեց գետին։ Նա լաց էր լինում և ոտները քացոտելով կրկնում՝ «ձի կ'ուզեմ»։ Գլխարկը մի կողմ ընկնելով երևան էր հանել ոսկեգոյն մազերը և գեղե-

ցիկ ճակատը։ Այդ նկատելով ձիաւորները, թողին իրանց խաղը և հաւաքեցան տղայի շուրջը։

—Ա՛յ ծերուկ, ինչո՞ւ ես լացացնում այդ չքնաղ մանկան, ասաց ձիաւորներից մէկը։

—Ի՞նչ անեմ, աղա ջան, գլխուդ մեռնեմ, ձեր ձիերի նման մի ձի է ուզում, իսկ ես փող չունեմ ձեռիս։

—Ահա իմ ձին քեզ ընծայ, աննման մանուկ, ասաց մի երիտասարդ թռչելով երիվարի վրայից և Եաշի-Ֆիդանին իր ձեռով ձիու վրայ նստեցրեց։

Եաշի-Ֆիդանը իր ցանկութիւնն կատարուած տեսնելով՝ իսկոյն հաւաքեց ամեհի ձիու սանձը և որպէս քաջավարժ հեծեալ՝ ուղղեց նրա գլուխը դէպ Ջրաղաց։ Ծերունին հաղիւ կարողացաւ շնորհակալութիւն յայտնել վեհանձն երիտասարդին և հետևել նրան։

Մի քիչ գնալուց յետոյ նրանց հանդիպեցին որսորդները, որ որսկան շները յետևից գցած, նիզակներն ուսերին, գնում էին որսի։

—Պապի, էն առաջինները մարդիկ են, հապա էն յետևի փոքրիկ-փոքրիկ կենդանիներն ու ուսերի երկար ու բարակ բաներն ինչ են, դարձեալ հարցրաւ Եաշի-Ֆիդանը։

—Յետևիններները՝ որսկան շներ են, իսկ ուսերին դրածները՝ նիզակներ, մարդիկն էլ՝ որսորդ, գնում են իրանց համար որսի։

—Ես էլ որսկան շուն և նիզակ կ'ուզեմ։

—Այ որդի, բաւական է ինձ չարչարես, ասաց բարկացած ծերունին։

—Չէ՞, ինձ որսկան շուն, նիզակ է հարկաւոր, ասելով շրջեց գետին ձիու վրայից Եաշի-Ֆիդանը և սկսեց թափլտել ցեխերի մէջ։ Որսորդներն հաւաքեցան նրա գլխին և սկսեցին յանդիմանել ծերունուն, որ թոյլ է տալիս այդպիսի մանկան լաց լինելու և ցեխերի մէջ քաշկռտելու։

—Ի՞նչ անեմ, որ թոյլ չըտամ։

—Ի՞նչ է պահանջածը, հարցրեց որսորդներից մէկը։

—Ձեր որսկան շների նման մի շուն և նիզակների նման մի նիզակ։

—Ահա իմ շունը և նիզակը քեզ նէէր, ասաց մի որսորդ Եաշի-Ֆիդանին՝ տալով նրան իր նիզակը և շունը։

Իսկոյն վեր կացաւ Եաշի-Ֆիդանը նստեց իր ձին, նիզակը դրեց ուսին և շունը գցեց յետևից ու առաջացաւ դէպի Ջրաղաց։

—Տեսա՞ր, այ մարդ, Եաշի-Ֆիդանիս հետդ քաղաք չէիր տանում, որքան օգուտ բերեց, ասաց պառաւը ծերունուն, հետաքրքրութեամբ եղելութիւնը լսելուց յետոյ։

—Է՞, այնքան չարչարեց, որ մօրիցս ծծած կաթը քթիցս բերեց, պատասխան տաւ ծերունին տրտնջալով։

Սրանից յետոյ Եաշի-Ֆիդանը ամեն օր նիզակը ձեռին, շունը յետևից գցած՝ տանում էր ձին արածացնելու և երեկոյեան վերադառնում Ջրաղաց։ Մի առանձին սովորութիւն էր արել ձին՝ ամեն անգամ Ջրաղացին մօտենալիս խրխնջալ։ Նրա ձայնի վրայ իսկոյն դուրս էր թռչում Ջրաղացից Նուռու-Գիւզալը ձեռները ծափահարելով և ջան, եղբայրս էլ— ասելով՝ նա վազում, փաթաթւում էր եղբօր վզովը, ձեռքից առնում ձիու սանձը և ինքը քարշում ձին ախոռը՝ կերակրում։

Մի անգամ ծերունին պատուիրեց Եաշի-Ֆիդանին ասելով. «Եաշի-Ֆիդան ջան, ձին մը կողմն արածացնե-

լու տանում ես՝ տաը, բայց մեր այս առի ընթացքին հակառակ շատ վերև մի գնար. այնտեղ գտնուում է թագաւորի մարգագետինը, ուր ոչ ոքի թոյլ չի տրուում մուտք գործել»։

—Էհ, պապի, չեմ գնալ հեռու, մօտ տեղերը կ'ածածացնեմ ձիս, պատասխանեց Եաշի-Ֆիդանը, բայց հետևեալ օրը չկարողացաւ իր հետաքրքրութիւնը զսպել. նա շարունակ մտածում էր—ինչպիսի տեղ է, որ ոչ ոքի թոյլ չեն տալիս ներս մտնելու և ինչու համար։

Հակառակ իր խոստման՝ նստաւ ձին և առի ափերով գնաց՝ ուղիղ թագաւորի մարգագետնի մէջ տեղը ձին օրգեց. ինքն էլ վերարկուն քաշեց գլխին, հանգիստ պարկեցաւ անուշահոտ ծաղիկների մէջ։ Այդ բոպէին թագաւորը պալատի պատշգամբում նստած՝ հեռադիտակով նայում էր քաղաքի շրջակայքը. յանկարծ հեռադիտակն ուղղեց դէպ իր մարգագետինը ու կանգ առաւ. կանչեց վէզիրին և ասաց. «Օձը իր պորտով, թռչունն իր թևով չի համարձակւում իմ մարգագետնում մուտք գործել, ինչպէս է համարձակւել մի մարդ մտնել այնտեղ և իր շնով ու ձիով տրորել ծաղիկները։ Այս բոպէիս ուղարկիր տասն քաջեր՝ նրան սպանելու»։

Վէզիրն շտապեց թագաւորի պատուէրը կատարելու։ Տասն զինուած մարդիկ իրար հետ վիճելով արագութեամբ մօտենում էին Եաշի-Ֆիդանին։ Մէկն ասում էր.—ինչ լաւ ձի է, ես ձին կըվերցնեմ, միւսը թէ՝ - ես շունը կըվերցնեմ, երրորդը թէ՝—ես նիզակը։

Աղբիւրի ընկերներ ինչ ուզում եք ասա
Գիրքը կատարեալ շատ լաւ պիտի պահեք
Ե. Վորոնիերեվ շատ լավ գիրք

ունն արդէն իմաց էր տուել Եաշի-Ֆիդանին թշնամիների գալուստը։ Նրանց խօսակցութիւնը լսելուն պէս, իսկոյն վեր կացաւ նա, թռաւ ձիու վրայ, և նիզակը ձեռին դիմեց դէպի թշնամիները, որոնք նրան ոչնչի տեղ դնելով՝ ամեն մէկը իրան հասանելիք բաժնի վրայ էր միայն մտածում։ Սակայն Եաշի-Ֆիդանը մի ակնթարթում նրանց շփոթեցրեց և իր նիզակի սուր ծայրով միմեանց ետևից գլորեց գետին։ Ինքն ոստանելուց յետոյ, տասնեքորդի լեզուն ու շրթունքները կտրեց ու ազատ թողեց՝ թագաւորին լուր տանելու համար, իսկ ինքը հանգիստ և անվրդով ձին նստած վերադարձաւ ջրազաց։

Հետևեալ առաւօտն նոյնպէս եկաւ և նոյն տեղը օրգեց ձին։ Բարկացած թագաւորը հրաման տուաւ վէզիրին. «Այսօր կ'ուղարկես յիսուն քաջ ձիաւորներ, նրան ողջ բռնել կըտաս և կըբերես ինձ մօտ։ Երէկ ինչպիսի թուլամորթ մարդիկ էիր ուղարկել, որ չըկարողացան մի մարդու հետ կռուել. ինչպէս կարող է մի մարդը տասը մարդու յաղթել և սպանել։

Ոտից մինչև գլուխ զինուած յիսուն ձիաւորներ մօտենում էին Եաշի-Ֆիդանին. մի բոպէ ևս, և նա շրջապատուած կըտեսնէր իրան թշնամիներով, սակայն ամենևին չըշփոթուեց՝ իսկոյն թռաւ ձիու քամակը, ասպանդակեց դէպի թշնամիները և նրանց աջ կողմից սկսելով՝ դէմն եկածը բանջարի նման թափեց գետին մինչև

ձախ կողմի վերջին մարդուն հասնելը. նրա էլ լեզուն ու շրթունքները կարեց և ազատ թողեց որպէս լրատար, իսկ ինքը ձեռն ականջին դրած երգելով վերադարձաւ ջրաղաց:

Երրորդ օրը՝ սովորական ժամին ման էր գալիս մարգագետնում Եաշի-Ֆիդանը, իսկ ձին շրփշրփացնելով արածում էր խոտերը:

- Անպատճառ այդ մարդուն ողջ ողջ բռնած այսօր ինձ մօտ կբերես, եթէ ոչ՝ վաղը դու կբարձրանաս կախաղան նրա փոխարէն, ասաց զայրացած թագաւորը վեզիրին:

—Թագաւորն ապրած կենայ, ինչպէս երևում է, մենք զօռով չենք կարող յաղթել այդ մարդուն թէկուզ ամբողջ զնդեր հանենք նրա դէմ, սակայն եթէ թոյլ կրտաս, ես ուրիշ կերպ կարող եմ բռնել նրան:

Արա, ինչպէս կամենում ես՝ միայն թէ կենդանի բռնի, պատասխանեց թագաւորը:

Հնարագէտ վեզիրը իսկոյն կազմեց մի ծաղրածու խումբ, որ բաղկացած էր տեսակ-տեսակ պարողներից և նուագածուներից: Այդ խումբը սկսեց ածելով, երգելով ու պարելով մօտենալ Եաշի-Ֆիդանին, որն իր կեանքում այդպիսի բան չըտեսած՝ ապշած մնացել էր և զարմանքով դիտում էր՝ մերթ պար եկող արջին, մերթ կապիկին, մերթ զանազան տեսակ ածելու գործիքներին, որ իրանց խառնիճաղանճ և ճիւաղային ձայներով խլացնում էին նրա ականջը:

Խումբն այնքան շարունակեց իր պաշտօնը՝ մինչև որ բոլորովին մօտեցաւ Եաշի-Ֆիդանին, շրջապատեց և առանց ընդդիմադրութեան բռնեց նրան:

Թագաւորի կատաղի զայրոյթը փոխուեցաւ ներքին

շփոթութեան և յուզմունքի, երբ իր առաջ կանգնած տեսաւ ձեռ ու ոտը շղթայած Եաշի Ֆիդանին: Նրա սիրտը սկսեց թռթռալ, ձեռները դողդողալ և մի ինչ որ ներքին յուզմունք խառնել արիւնը իրան անհասկանալի պատճառով. սակայն մի կերպ կարողացաւ զսպել իր ներքին այլայլութիւնը և սառնութեամբ հարցրեց.

—Ա՛յ տղայ, դու ինչպէս ես համարձակւում իմ մարգագետինը տրորել և ուղարկածս մարդկանց սպանել:

—Տէր իմ, ձիուս համար հարկաւոր էր արածացնելու տեղ, իսկ դրան յարմար էր քո մարգագետինը. այդ պատճառով բերում էի ձիս արածացնելու, բայց տեսնում էի, որ քո մարդիկը չար դիտաւորութեամբ գալիս էին ինձ վնասելու, ուստի նախ քան նրանք ինձ վնասելը, ես էի նրանց վնասում:

Այս համարձակ խօսքերը լսելով, թագաւորը՝ զարմացած մտիկ էր տալիս Եաշի-Ֆիդանին:

—Դու ով ես:

Մի ջրաղացպանի որդի:

Նա գլուխը տարուբերելով մտածում էր. ջ-ղ-ա-ն-ի տղա՞ է դրէ՞:

—Քանդեցէք դրա շղթաները. վերջ ի վերջոյ հրամայեց ոստիկաններին: Այ տղայ, եթէ քո յանցանքդ ներեմ, շուտ շուտ կըգաս ինձ այցելութեան: Թող քո ձին արածի որտեղ ուզում ես՝ միայն դու այցելիր ինձ:

- Ինչու չէ, թագաւորն ապրած կենայ՝ կըգամ, պատասխանեց Եաշի-Ֆիդանը:

Այնուհետև Եաշի-Ֆիդանը սկսեց իր այցելութիւնները թագաւորին: Այս նկատեցին տարաբախտ թագուհու քոյրերը և հասկացան բանի էութիւնը, թէ՝ ա-

րեր որտեղ է թաք կացել և ինչ վտանգ է սպառնում իրանց, ուստի շուտով կանչեցին Ջրդուչերին և գործի եղելութիւնը պատմելուց յետոյ ասացին.

Ի՞նչպէս սկսեցիր գործդ, որ թաղած մեռելդ այսպէս շուտ յարութիւն առաւ։

Դուք անհոգ եղէք, ես իմ գործի թերին կըլրացնեմ, պատասխանեց պառաւը։ Հուղեցի պալատում ձեռներս նրանց արիւնով թաթախել՝ ջրին յանձնեցի, բայց դէպքն այնպէս է բերել, որ ազատուել են։ Հէնց վաղը ես նրա (Եաշի-Ֆիդանի) հետքն այնպէս կորցնեմ, որ ինքը սատանան էլ չ'իմանայ, թէ ինչ եղաւ։

Հետևեալ առաւօտեան Ջրդուչեր պառաւը ձեռին մի գաւազան քոթքոթացնելով՝ դիմեց Ջրաղաց։ Այդ միջոցին Նուռուռ-Գիւզալը առուի ափին նստած՝ մի փունջ ծաղիկ թափում էր ջրի հոսանքին հակառակ և ձեռները դէմ արած սպասում մինչև փնջի վերադառնալը՝ բռնում, ապա նորից թափում և հետն էլ երգում էր.

Ջան, ջան, Եաշի-Ֆիդան ջան,
Անուշ եղբայր ջան,
Հոգուս հատոր ջան,
Ջանս քեզ զուրբան։
Եաշի-Ֆիդանս կըգայ,
Վարդ, մանուշակ կըբերէ,
Պապս ալիւր կ'աղայ,
Մամս բաղարջ կըթխէ։
Ջան, ջան, Եաշի-Ֆիդան ջան,
Անուշ եղբայր ջան,
Հոգուս հատոր ջան,
Ջանս քեզ զուրբան։

Այդ րոպէին վրայ հասաւ անգութ պառաւը և զոյգ ձեռներով բամբեց հրեշտականման էակի գլխին։

—Իա՜, ես ինչ արի քեզ, պառաւ, յետ նայելով բացականչեց Նուռուռ-Գիւզալը և մարգարտանման արցունքները ցոլացրեց աչքերում։

—Նուռուռ-Գիւզալ ջան, աղջիկս, ես ատելուս համար խօ չըխփեցի քեզ, սիրելուս համար էր,—իր խորշոմած դէմքին կեղծ արտայայտութիւն տալով շողոքորթեց պառաւը։

—Ի՞նչպէս թէ սիրելուս։

—Ա՛յ ինչպէս. դու չես հասկանում, որ արդէն հասակդ առել ես. քեզ ի՞նչ կըվայելէ սրանից յետոյ անգործ մնալ՝ դատարկ ժամեր անցկացնել և միայն ծաղիկների ու ջրերի հետ խաղալ։ Քո ընկեր աղջիկներն արդէն ամեն բան սովորել են՝ կարել, ձևել, գործել, իսկ դու ոչինչ չըգիտես։ Վաղը, միւս օրը քեզ հարս կըտանեն և իւրաքանչիւր մի ժամում ոչինչ չըգիտենալուդ համար՝ երեսիդ թուք ու մուր կըթափեն։

—Է՜, այսօր Եաշի-Ֆիդանս կըգայ, կ'ասեմ, որ վաղն երթայ քաղաք՝ կտոր, թել ու ասեղ բերէ, կարեմ-կարեմ՝ սովորեմ։

—Օ՜, այդ չ'եղաւ. էլ նո՞ր պիտի դու կար ու ձև անել սովորես. վարպետ չ'ունես, որ քեզ խրատ տայ, մանաւանդ որ հասակդ մեծացել է, մատներդ կոշտացել՝ այլ ես չես կարող դու կար ու ձև սովորել։

—Ասա ինչպէս պէտք է անել։

—Ի՞նչպէս, միայն մի միջոց կայ, այն եղաւ՝ եղաւ, չ'եղաւ՝ այլ ես անհնար է քեզ կար ու ձև սովորեցնել։

—Ո՞ւն է այդ միջոցը։

—Այն, որ Հնաշխարհիկ կայ. նա ունի դեղ, որը

եթէ ձեռ բերէք, նա ինքը քո առաջին գրած՝ իրան-իրան կը գործէ և դու առանց դժուարանալու, հանգի՞ստ կերպով կը սովորես և աշխարհիս ամենագլխաւոր կար ու ձև անողը կը լինես։

— Է, ինչ կայ որ, Եաշի-Ֆիդանիս կ'ասեմ, որ է դուց երթայ այդ ֆէրիշտը բերէ։

— Օ՜, այդքան էլ հեշտ չէ նրա բերելը. մանաւանդ որ Եաշի-Ֆիդանն իսկոյն յանձն չի առնիլ նրա հետից գնալ։

— Հապա ինչպէս անել։

— Ա՛յ, քեզ խրատ տամ թէ ինչպէս անել. բայց խրատներս պէտք է ճշտութեամբ կատարես, եթէ ոչ՝ կը զրկուես ֆէրիշտից։ Երեկոյեան Եաշի-Ֆիդանի գալու ժամանակ կերթաս ջրաղաց՝ տխուր տրտում կը նստես և բոլորովին դուրս չես գալ նրա առաջ։

Երբ Եաշի-Ֆիդանը ներս կը մտնի և կը հարցնէ քո տխրութեան պատճառը, սկզբում պատասխան չես տալ և դէմդ թթուեցրած շուռ կը գաս նրանից. նա կը հետաքրքրի իմանալ թէ ինչու ես տխուր. բայց դու միայն այդքանը կ'ասես՝ թո՛ղ, ոչ ինձ պէս քոյրը լինի և ոչ քեզ պէս եղբայրը։ Յետոյ կը պատմես, որ դու հասակդ առել ես, վաղը միւս օրը հարս կ'երթաս, բայց ոչինչ չը գիտես, անտաշ մեծացել ես և սրանից յետոյ ոչինչ սովորել էլ չես կարող, եթէ Զնաշխարհիկի ֆէրիշտը չը բերի։ Մինչև որ Եաշի-Ֆիդանը քո արևովդ չ'երդուի թէ անպատճառ կը բերեմ ֆէրիշտը, ուրախ դէմք ցոյց չը տաս։

Պառաւը Նուռու-Գիւզալի անմեղ սիրտը և պարզ հոգին պղտորելուց ու չը չար դիտաւորութիւններին յաղուրդ տալուց յետոյ, անհետացաւ։

Իրիկնապահ է։ Արեգակը թեք քցել է իր ճառագայթները ջրաղացին և նրա շուրջը տարածուող գեղեցկատեսիլ հովիտներին։ Վճիտ առուն դուրս գալով ջրաղացից՝ ոլոր-մոլոր օձապտոյտ ձևերով անցնում է այդ հովիտների միջով և արեգակի ճառագայթները բեկբեկելով իր մէջ՝ ցոլանում զանազան կողմեր։ Ամբողջ տարածութիւնը լցուել է անուշահոտ բուրմունքով։ Ուրախ և զարթ դէմքով վերադառնում է Եաշի-Ֆիդանը թագաւորի մօտից։ Նա աչքերը ուղղել է դէպ ջրաղացի դուռը և սպասում է, թէ ահա իր ձիու սովորական խրխինջին դուրս կը թռչի ջրաղացից Նուռու-Գիւզալը ձեռները ծափահարելով և ջան էլէյս էլա— ասելով. սակայն ձիու առաջին խրխինջը մնում է անհետևանք. կրկնւում է երկրորդ և երրորդ անգամ կոչը, բայց Նուռու-Գիւզալը չը կայ ու չը կայ։ Մի մռայլ ամպ անցաւ Եաշի-Ֆիդանի գլխի վրայից. չը լինի՞ քոյրս հիւանդ է, ասելով նա թռաւ ձիու վրայից և շտապեց ներս։

Գլխիկոր՝ տխուր և տրտում նստած է Նուռու-Գիւզալը ջրաղացքարի մօտ՝ աչքերը մի կէտի սևեռած։ Նրա ոսկեգոյն մազերը քօղի նման սփռուել են երեսի և ուսերի վրայ։ Եաշի-Ֆիդանը անհանգիստ տրտով մօտեցաւ նրան և ասաց. «Ի՞նչու ես այդպէս տխուր, Նուռու-Գիւզալ ջան»։ Ձայն-ձուկ չը կայ։

— Ի՞նչ է պատահել, սիրելի քոյրիկս, նրա գեղեցիկ մազերը շոյելով հարցրեց Եաշի-Ֆիդանը։

— Թող, ոչ ինձ պէս քոյրը լինի և ոչ քեզ պէս եղբայրը, շուռ գալով քթի տակը պատասխանեց Նուռու-Գիւզալը։

Ուրիշ անգամ լինէր՝ գուցէ այս խօսքերը հանարի տեղ ընդունէր Եաշի-Ֆիդանը, բայց այս անգամ սուր

սլաքի նման ցցեցան նրա սրտում։

—Ախը ինչ է եղել, է, վիրաւորւած կրկնեց նա իր հարցը։

—Դեռ էլ լինի. ահագին սև քարէցուն եմ դառել, մի ասեղ թելել չըգիտեմ. բոի կերել եմ, բոի մեծացել. իմ ընկեր աղջիկներն արդէն ամեն ինչ սովորել են՝ կարել, ձևել, գործել, իսկ ես՝ ոչինչ։

—Ա՞յդ է քո դարդը. դրա համար ես տխրած, բացականչեց Եաշի-Ֆիդանը.—հէնց վաղը կըգնամ քաղաք՝ թել, ասեղ, կտոր կըբերեմ, որ ձևես, կարես՝ սովորես։

—Էլ նոր պիտի ես կար ու ձև անել սովորեմ. վարպետ չունեմ, հասակս արդէն մեծացել է։

—Վարպետ էլ կըհրաւիրենք։

—Չէ, այդ էլ չի լինիլ, միայն մի միջոց կայ—եղաւ՝ եղաւ, չ'եղաւ, այլ ես ոչ մի հնար չի օգնիլ։

—Ի՞նչ է, ասա։

—Այն որ՝ Զնաշխարհիկ կայ, եթէ նրա ֆէրիշը բերիր, կըգնեմ առաջիս, նա ամեն ինչ կըգործէ իրանիրան, ես էլ կըտեսնեմ՝ կըսովորեմ։

—Հէնց վաղը կըգնամ այն բերելու։

—Ա՜հա, կարծում ես՝ հեշտ է։

—Թէկուզ ծովի անդունդը լինի, կըհանեմ։

—Երդւիր, որ ճիշտ կըկատարես խոստումդ։

—Արևս վկայ, որ կըբերեմ։

—Չէ, քո արևով մի երդւիր, իմ արևով երդւիր, ես կըհաւատամ։

—Քո արևդ վկայ, որ կըբերեմ։ Դէ մէկ դէմքիդ տխրութիւնը փարատիր՝ ամեն օրւայ նման ձեռներդ ծափ դարկ և ծիծաղիր։

Անմեղ աղաւնիի նման Նուռու-Գիւզալը ծափահարեց և բարձր ծիծաղեց, ինքն էլ չըհասկանալով, թէ ինչ անդունդ բաց արաւ եղբօր առաջ։

Նոյն երեկոյեան Եաշի-Ֆիդանը պապին և տատին յայտնեց, որ ինքը առաւօտեան ճանապարհ պիտի ընկնի՝ Զնաշխարհիկի մօտից ֆէրիշը բերելու Նուռու-Գիւզալի համար, պատրաստութիւն տեսնեն՝ մի քանի բաղարջ թխեն։ Ծերունին և պառաւը շատ լացին ու աղաչեցին, որ յետ կենայ այդ չար գիտաւորութիւնից՝ առարկելով թէ այնտեղ հաղար գնացողի մէկը չի վերադարձել, սակայն ոչ մի կերպ չըկարողացան համոզել Եաշի-Ֆիդանին...

Զ.

Լուսաբացին Եաշի-Ֆիդանը ճանապարհ ընկաւ։ Շատ գնաց թէ քիչ՝ Աստուած գիտէ. օրւայ մէկը մի քարայրի դէմ առաւ։ Քարայրի դռանը նստած էր մի հսկայ պառաւ դև, որ ջրաղացքարն արել էր թեշկի գլուխս, մի կաղնու բուն՝ նրա պոչը, մօտ քառասուն լիտր արճիճ քցել էր բերանը և թարս ու շիտակ լըփլփացնելով ծամում էր ու սայլի պարանի հաստութեամբ թել մանում։ Նրա զարհուրեցուցիչ դէմքը և անճոռնի կերպարանքը ոչ պակաս սարսափ ձգեցին Եաշի Ֆիդանի վրայ, սակայն վերջինս յետ չըքաշւեց, այլ առաջ գնաց և կանչեց. «Բարի իրիկուն քեզ, մայրիկ, ինձ հիւր չե՞ս ընդունիլ»։

Դևը գլուխը բարձրացրեց և կատաղի աչքերը Եա-

չի-Ֆիդանի վրայ չռելով ասաց. «Մարդ օրհնէքը գլուխդ էր, այ ադամ-որդի, թէ բարև չէիր տայ, ու ինձ մայրիկ անուանելով չէիր ցանկայ իմ մօտ հիւր լինել, քեզ քո ձիուդ հետ կըբցէի բերանս՝ ծամոցիս հետ կըխառնէի՝ փափկացնելու համար, բայց որ ինձ բարև տալով հայրիկ անուանեցիր և ուզում ես դիշերել մօտս, իջիր ձիուց՝ հիւրն Աստծունն է»։

Երեկոյեան Եաշի-Ֆիդանն ասաց դեռին. «Մայրիկ, ըսկի չես հարցնում ինձ թէ ով ես, որտեղից ես գալիս և ուր գնում։

—Մենք սովորութիւն չունենք հիւրին հարց ու փորձ անելու. եթէ դու ցանկանում ես քո մասին խօսել, խօսիր, կըլսեմ, պատմեցնեց դեռ։

—Մայրիկ, ես գնում եմ Զնաշխարհիկի մօտից նրա դեսպանը բերելու։

—Է՞, որդի, իր անճռռնի գլուխը ամբամբացնելով ասաց դեռը.—այդ միտքը քո մէջ անպատճառ չար մարդիկ ծագեցրած կըլինին։ Լաւ է, որ այստեղից յետ դառնաս. ափսոսում եմ քեզ պէս պատանուն. հաղարաւոր մարդիկ գնացել են այդ ճանապարհով, բայց ոչ ոք չէ կարողացել վերադառնալ։

—Չէ, մայրիկ, ի զուր են այդ խօսքերը. եթէ համոզուած լինեմ, որ ես էլ այդ հաղարաւորների թւում կորչելու եմ, դարձեալ պիտի գնամ։

—Է, որդի, թէ որ այդպէս է, ես էլ իմ կողմից միջոցներ կըտամ քեզ, որ եթէ ճշտութեամբ կատարես՝ անշուշտ կըհասնես նպատակիդ. ճանապարհիդ առաջին անգամ քեզ կըպատահի մի առուակ, որից անցնելու ես, բայց նախ քան անցնելդ՝ մի տուն երդ կասես, եթէ ոչ այդ փոքրիկ առուն վայրկենապէս ծով կդառնայ

և քեզ քո ձիուդ հետ կըկլանէ։ Դրանից յետոյ կըտեսնես հեռուում մի քանի ըժան ըժան ծառեր, մի տուն երդ էլ այդտեղ կ'ասես. հակառակ դէպքում այդ ծառերն այնպէս կըրաղմանան և կըխառնան, որ բոլորովին կըփակեն ճանապարհդ։ Ծառերից յետոյ աջ և ձախ կողմերդ կ'երևան մի մի բլուր, որոնց միջով անցնելու ես. անշուշտ մի տուն երդ էլ այդտեղ կ'ասես, որ նրանց սիրան էլ շահած լինես, որպէսզի անցնելուդ միջոցին ահագին լեռներ կաղմելով իրար չըդան և քեզ ձիուդ հետ իրանց մէջը ճմլեն ու տափակացնեն։ Երբ արդէն բլուրներից էլ կ'անցնես՝ առաջիդ կըբացուի մի ընդարձակ դաշտավայր՝ հարթ տարածութիւն, որտեղ իշխում է Զնաշխարհիկը. այդ դաշտավայրի մէջ է կառուցած նրա բուրգերով շրջապատուած ապարանքը։ Ապարանքին մօտենալուն պէս՝ ձիդ մի կողմ կըքաշես և ինքդ գան մօտ գտնուած զանգակը ամուր խփելով ամենայն զգուշութեամբ կըթագնես սանդուղքների տակ։ Զնաշխարհիկը զանգակի ձայնին դուրս կըգայ տեսնելու, թէ ով էր իր զանգին դիպչողը։ Դու ամեն կերպ պէտք է աշխատես նրա աչքին չ'երևալ, եթէ ոչ՝ բաւական է, որ միայն քո դէմքը տեսնի և իսկոյն՝ եղունգին նայելուն պէս՝ քար կըդառնաս. այդպէս հազարաւոր մարդիկ են քար դարձել նրանից, որոնց կըտեսնես դու նրա ապարանքի շուրջը։ Երբ նա սանդուղքներից ցած կ'իջնի մէջքը քեզ արած, մի ակնթարթում կըթուչես նրա ուսերի վրայ, երկար մազերը թեզ կըփաթաթես և այնպէս հուժկու կերպով կըքաշես ու կըտանջես, մինչև որ երդի երկրի, երկնքի և նրանց Ստեղծողի անունով, որ ոչ մի վնաս քեզ չի հասցնիլ։ Երդումն առնելուց յետ կ'արձակես և ապահով եղիր,

որ ոչ մի վնաս չի հասցնիլ քեզ։

Նա առաւօտեան շնորհակալութիւն յայտնելով պառաւ դևին՝ ճանապարհ ընկաւ։ Հազիւ թէ գիշերավայրը անհետացել էր նրա աչքից, որ նկատեց դևի ասած առակը.

«Սա պիտի ինձ խեղդէ, մտածում էր նա, որն եթէ մի ծարաւ մարդ խմէ՝ կըցամաքի», և սկսեց ձին ասպանդակել թռչելու առիւց. սակայն ձին դեռ մի քայլ չէր արել, որ առուն իր ափերից դուրս գալով, հետզհետէ սկսեց ծովանալ և Եաշի-Ֆիդանին մի անգամից կլանելու վտանգ սպառնալ։ Նա քաշեց ձիու սանձը և իր անման ձայնով սկսեց երգել. իսկոյն հանդարտուեց առուն, փոքրացաւ և իր նախկին քշքշոցով առաջ սահեց։ Անցաւ Եաշի-Ֆիդանը և շարունակեց ճանապարհը։ Ահա հեռւում երևում են մի քանի ծառեր՝ ջոկ ջոկ բուսած։ «Է՛հ, ցնորք էր դևի ասածը՝ մինչ այդ ծառերը խաանան, ես ճանապարհս կըշեղեմ և հեռւից կ՚անցնեմ», մտածեց նա, բայց դեռ տասը քայլ չէր անցել, որ ամբողջ տարածութեամբ ճանապարհը փակուած տեսաւ անանցանելի անտառով։ Նա կանգ առաւ և երգեց. ծառերը աննշմարելի կերպով հետզհետէ չքացան և լայն ճանապարհ բաց արին նրա առաջ։ Ծառերից անցնելուն պէս՝ իր աջ և ձախ կողմերում միմեանցից ահագին հեռաւորութեամբ նկատեց երկու փոքրիկ բլուրներ։—Էհ, մինչ այդ բլրակների միմեանց դալը, ես նրանց միջից կ՚անցնեմ ու կ՚անցնեմ—ասելով՝ ասպանդակեց նա ձին. բայց հազիւ կարողացաւ շուրջը նայել, թէ ինչպէս այն փոքրիկ բլրակները ահագին լեռներ դարձած՝ կայծակի արագութեամբ սլանում են դէպի ինքը։ Զսպեց ձիու ընթացքը և սկսեց երգել։ Լեռները յետ

յետ դնալով փոքրացան և իրանց տեղը կանգ առան։

Ահա վերջապէս Եաշխարհիկի ապարանքը՝ շրջապատուած բարձր պարիսպներով և սրածայր բուրգերով։ Նրա շուրջը խառնիխուռն ընկած են բազմաթիւ քարեր, որ իրանց տեսքով մարդու մարմնի են նմանում։ Եաշի-Ֆիդանը մօտեցաւ ապարանքին, ձին մի անկիւնում կապեց և ինքը զանգահարելուց յետ, թաքնուեցաւ սանդուղքների տակ։

Մի րոպէ չանցած՝ երևեցաւ Եաշխարհիկը պատշգամբում և իր շուրջը նայելով սկսեց ցած իջնել սանդուղքներից։ Հազիւ էր ոտը վերջին աստիճանի վրայ դրել, որ Եաշի-Ֆիդանը սանդուղքների տակից բաղէի նման թռաւ նրա ուսերի վրայ, փաթաթեց մազերը ձեռքին, ծունկ խոնարհեցրեց և զօրեղ բազկով սկսեց քարշել։

—Ո՜հ, հրեշ ես, մարդ թէ գազան, խնայիր ինձ, ցաւից ճնշուած բացականչում էր Եաշխարհիկը։

—Երդուիր, որ քո վնասը ինձ չի հասնիլ արձակելուց յետ։

—Վկայ թող լինի լուսաճաճանչ արեգակը, որ ինձանից քեզ վնաս չի հասնիլ։

—Ոչ, երդուիր երկրի, երկնքի և նրանց Ստեղծողի անունով։

—Երդւում եմ երկրի, երկնքի և նրանց Ստեղծողի անունով, որ ինձանից մի մազաչափ վնաս չի հասնիլ քեզ։

Եաշի-Ֆիդանը բաց թողեց մազերը։ Եաշխարհիկը շուռ եկաւ դէպի նա, և երկուսն էլ ապշեցան տեղն ու տեղը։ Երկու աննման արարածներ կանգնած էին միմեանց հանդէպ։ Նրանք մեծ զարմանքով երկար ժամա-

նակ դիտում էին իրար։ Եաշի-Ֆիդանը նետահարի նման ինքն իրան մոռացել էր՝ տեսնելով իր առաջը կանգնած աշխարհի դիցուհուն։ Նրանից ոչ պակաս չփոթուած էր Զնաշխարհիկը. առաջին անգամն էր նա տեսնում այդպիսի մի բարձրահասակ և վայելչագեղ երիտասարդ։

— Այ տղայ, —ընդհատեց լռութիւնը Զնաշխարհիկը՝ խլելով Եաշի-Ֆիդանի ձեռից նիզակը և իր ու նրա մէջ տեղը գետին դնելով, ես Աստծուն ուխտ էի արել ամուսնանալ այն տղի հետ, ով ինձ կըյաղթէ։ Մինչև այժմ հազարաւոր երիտասարդներ եկել են իմ ձեռս խնդրելու, բայց բոլորն էլ ինձանից յաղթուելով քարացել են։ Առաջինն ես դու՝ որ յաղթեցիր ինձ. եթէ կըցանկանաս ինձ հետ ամուսնանալ, յայտնիր կամքդ, իսկ եթէ ոչ՝ ահա նիզակը, քո ձեռով խրիր կուրծքս, որ իմ ուխտը չըքանդուի և սուրբ ու անարատ մնայ, ասաց Զնաշխարհիկը նիզակն երկարացնելով Եաշի-Ֆիդանին։ Սակայն չփոթուած Եաշի-Ֆիդանը չէր իմանում ինչ պատասխանէր։ Նա նիզակը մի կողմը շպրտեց և միայն գլխով նշանացի արաւ հասկացնելով, թէ համաձայն եմ քո առաջարկին։ Զնաշխարհիկը հասկացաւ նրա միտքը և թև թևի տուած բարձրացրեց նրան սանդուղքներից վեր։

Եաշի-Ֆիդանը բոլորովին մոռացաւ թէ ձին և թէ իր գալու նպատակը։ Զին երկար ժամանակ սոված ու ծարաւ մնալուց յետոյ՝ քաշեց կտրեց կապը և ջրաղացի ճանապարհը բռնեց։ Անցաւ մէկ, երկու, երեք... օր, և ահա նա ջրաղացի դռանը ոտը գետին դոփելով՝ բարձր խրինջաց. իսկոյն սրտապատառ դուրս թռաւ ջրաղացից Նուռու-Գիւզալը, կարծելով, թէ եղբայրն եկաւ,

բայց երբ տեսաւ միայն ձին, աչքերը մթնեցին, ծունկները ծալուեցին և աղիողորմ հառաչեց. «Ո՜հ Աստուած իմ, ուր է եղբայրս». յետոյ նա որդեկորոյս մօր նման փաթաթուեց ձիու վզովը՝ դառնագին լաց եղաւ և տաք տաք համբոյրներ տուեց ասպանդակներին, ուր մտել էին Եաշի-Ֆիդանի ոտները։ Ամբողջ գիշերը նա շարունակ հեկեկում էր և արտասուում առանց ձիու մօտից հեռանալու, որին կերակրում էր և խնամում, իսկ լուսադիմին փոխեց իր օրիորդական շորերը և ձեռն առաւ մի նիզակ ու հեծաւ ձին։ Վշտալի ծերունին և պառաւը արտասուաթոր աչքերով նրա ձեռ ու ոտն էին համբուրում, աղերսում ու պաղատում, որ իրանց ծերութեանը խնայէ՝ վերջին մխիթարութիւնից չըզրկէ և չըթողնի նրանց ու գնայ, բայց կարծես Նուռու-Գիւզալի ականջները խլացել էին, աչքերը մշուշով պատել է սիրտը քարացել, որ չէր զգում նրանց աղեկտուր ողբը և գիջանում խնդիրքին։

Ը.

Լրը տաք է և հանդարտ։ Պայծառ արեգակը իր լուսաճաճանչ ճառագայթները սփռել է ամենայն կողմ։ Վարդը և մանուշակը բաց են արել իրանց սիրուն թերթիկները և անուշահոտ բուրմունքով լցրել ամբողջ տարածութիւնը։ Ուրախ և անհոգ թիթեռնիկները թռթռում են ծաղկից ծաղիկ, իսկ քաղցրաձայն թռչունները թնդեցնում օդը։ Բայց այդ բոլորը չի լը-

սում Նուռու-Գիւզալը և չի զգում։ Նրա համար սև ու մութն է օրը։ Գլխի վերևը արտուտիկն է իր անուշ դայլայլիկը կարդում, իսկ ձիու առաջ եռանկիւնաձև միմեանց կտրելով արագաթռիչ ծիծեռնակները իրանց սուր սվսվոցով կարծես ուզում են ասել նրան. «Մի գնար, տիրուհի. մի զրկիր մեզ քո իշխանութիւնից», բայց նա սառն է և անտարբեր. միայն երբեմն երբեմն լայն բարձրանում է կուրծքը և աղեխարշ ոխը դուրս թռչում այնտեղից։ Շրկայ նրա հոգու հատոր եղբայրը, նա պատրաստ է գետնի տակը մտնել, ծովի անդունդը իջնել, միայն թէ եղբօրը գտնի. նա պատրաստ է երկաթէ տրեխներ հագնել, երկաթէ գաւազան ձեռն առնել և աշխարհի այս ծայրից մինչև միւս ծայրը ոտով անցնել՝ միայն թէ իր եղբօր տեղն իմանար։ Բայց ոչ ոք չրկայ, որ նրան եղբօր տեղն ասէ, ոչ ոք չրկայ, որ նրան ճանապարհ ցոյց տայ։ Մարգարտանման արցունքներն առւակի պէս հոսում են աչքերից և վարդագոյն այտերի վրայից թափելով ողողում նժոյգի բաշը։ Ո՞ւր գիմէ, ո՞ր ճանապարհով գնայ, որ չըշեղուի նպատակից։ Կամայ ակամայ սանձը գցում է ձիու գլխին, նրա կամքին թողնում ճանապարհի ընտրողութիւնը, իսկ ինքը միայն ասպանդակով խփում նրա կողքին, որ շտապէ առաջ։ Կարծես թէ խելացի կենդանին հասկացաւ տիրուհու միտքը, տեղացող կարկտի նման սկսեց արագ արագ ձգել միմեանց ետևից ոտները և արիւն-քրտինք մտած շտապել առաջ։

Արեգակը իր վերջին ողջոյնն էր տալիս բարձրագագաթ լեռներին, անցնում երկրագնդի միւս երեսը, իր կիսաշրջանը կատարում և ապա նորից ողջունում նոյն լեռներին, բայց Նուռու-Գիւզալի ոտները դուրս

չեն գալիս ասպանդակից և չեն դիպչում գետնին։ Նա ոչ ցուրտ ու տաք է զգում, ոչ քաղց ու ծարաւ և ոչ յոգնածութիւն, միայն մտածում է՝ գնա՛լ և գնալ։

Ահա վերջապէս քարայրը դևի, որ նստած չէմքի վրայ՝ իր պարանէ թելն է մանում և քառասուն լիդր արճիճը բերանում լմլմացնում։

—Բարև քեզ, մայրիկ, կանչեց Նուռու-Գիւզալը։

—Ասա՛ծու բարին, որդի, եկա՞ր. բերեցի՞ր ԽԷ-ՐԻ-ՅԸ։

—ՔԷ-ՐԻ-Յ՚Ը...

—Ինչո՞ւ չփոթեցար, ապա չրկարողացա՞ր բերել ԽԷ-ՐԻ-ՅԸ Շնաշխարհիկի մօտից։

—Ո՛հ, մայրիկ, ես չեմ ԽԷ-ՐԻ-ՅԷ գնացողը՝ իմ եղբայրս էր, ասա՛, ասա՛, ի՞նչպէս տեսար եղբօրս, և ո՞րպէս գընաց,—արտասուախառն աչքերով ասաց Նուռու-Գիւզալը և զրկեց զարհուրելի դևի ոտները, որին եթէ մի ուրիշ անգամ տեսնէր՝ գուցէ սարսափահար փախչէր, ծակէ ծակ մտնէր։

—Դու չե՞ս, ի՞նչպէս, բոլորովին նոյն ձին, նոյն տղան, միայն դէմքդ մի քիչ փոխուած է և մի ինչ որ փայլ եմ նկատում աչքերումդ, երևի այն էլ յաղթանակի նշանն է, որ տարել ես։

—Չէ, հաւատա՛ ինձ, մայրիկ, որ գնացողը իմ եղբայրս էր և ես յետևից եմ գնում։

—Ա՜հ, եթէ այդպէս է, քո եղբայրը յաղթուել է Շնաշխարհիկից։ Դու մի գնար, որդի, անփորձ պատանիներ էք՝ չէք կարող աղատուել Շնաշխարհիկի ճանկերից։ Ափսոսում եմ ձեզ. թէև ձեզ պէս հաղարաւոր մարդկանց արիւն եմ խմել և նրանց մարմիններին իմ փորում տեղ տուել, սակայն իմ անգութ սիրտը չի կարող անզգայ մնալ տեսնելով ձեզ պէս պատանիների

կորուստը։ Կրկնում եմ մի գնար։

—Ո՜հ, մայրիկ, մի տանջիր ինձ, ասաց Նուռու-Գիւզալը աղեկոտուր ձայնով,—ասա, որ ճանապարհով գնաց իմ եղբայրը, և ես անչափ շնորհակալ կըլինիմ քեզանից։

Պառաւ դևը տեսնելով, որ անկարելի է Նուռու-Գիւզալին յետ կացնել իր դիտաւորութիւնից, յայտնեց նրան այն միջոցները, ինչ որ Եաշի-Փիդանին էր խրատուել։

Դևի ամեն մի խօսքը հալած իւղի տեղ ընդունեց Նուռու-Գիւզալը։ Նա ամեն մի բառի վրայ մտածում էր և աշխատում՝ որքան կարելի է ճշտութեամբ կատարել՝ վախենալով, որ ամենափոքր մի սխալը կարող է իր սիրելի եղբօր տեսութիւնից զրկել։ Առանց մի բոպէ կորցնելու՝ նա հրաժեշտ տուեց դևին և նրա ցոյց տուած ճանապարհով ուղևորուեցաւ։

Նուռու-Գիւզալից ոչ հեռու վազում է առուն և իր քչքչոցով իմաց տալիս նրան մօտալուտ վտանգը։ Կանգնեց Նուռու-Գիւզալը և իր վշտախառն ձայնով սկսեց երգել։ Լռեց առուն. նա, կարծես մոռացաւ իր մրմունջը վշտալի ելևէջների ազդեցութեան ներքոյ, և լուռ ու մունջ սահեց առաջ իր գլուխը թագցնելու կանաչազարդ թփերի տակ։ Անցաւ նրա վրայից Նուռու-Գիւզալը և դիմեց դէպի ծառերը, որ իրանց գլուխները ցցած սպասում էին իր ոտով եկող օրսին։ Դեռ նրանց մօտ չհասած՝ սկսեց հնչեցնել իր քաղցրաձայն մեղեդին։ Լռեց առիւծը մռնչալուց, դադարեց վիշապը ֆըշշալուց, հմայուած ծառերը փոխարկուեցան վարդի թըփերի, բաց արին իրանց նորափթիթ կոկոնները և անուշ բուրմունքով լցրին աշխարհը։ Հազար ու մի տեսակ

ծաղիկներ գոյնզգոյն խալիչաների նման սփռուեցան Նուռու-Գիւզալի ոտների տակ, որոնց կոխկռտելով անցաւ նա և ուղևորուեց դէպ բլուրները։ Նրանք արդէն տատանւում էին իրանց տեղնուտեղը և պատրաստւում միմեանց գալ՝ ճմլելու և տապակելու եկւորին, երբ օդը թնդաց և ալիքանման տարածեց իր շուրջը վշտահար սրտի սուրբ զգացմունքները։ Կորան, անհետացան բլուրները և նրանց տեղ երևան եկան կանաչազարդ մարգագետիններ և հովիտներ։ Դալարագեղ ցորենի, գարու և կրտաւհատի արտերի միջից ողջունեցին կենսարեր հիւրին՝ լորը իր պլպլոցով, արտուտիկը իր դայլայլիկով և ծիծեռնակը սվսվոցով։ Սակայն նրանց սիրալից ողջոյնը չկարողացաւ մի բոպէ կանգնեցնել Նուռու-Գիւզալին։ Երևում է Հընաշխարհիկի ապարանքը։ Վրէժխնդրութեան կայծը բորբոքուեցաւ Նուռու-Գիւզալի սրտում և կատաղի արիւնը պատեց նրա աչքերը։ Ո՜հ, երանի թէ այս բոպէին նա մի սրաթռիչ արծիւ դառնար, սըլանար կայծակի արագութեամբ այդ ապարանքը՝ նրա տիրուհու մաղերը մէկ մէկ գլխին փետտէր, և այն բնակութիւնը, որ իր եղբօր կորստեան պատճառ է դառել, քանդէր, կործանէր, քարը քարի վրայ չթողնէր։ Նա ինքն էլ չէր զգում, թէ ինչպէս իր ոտները մեքենական շարժումով բարձրանում են օդի մէջ և ասպանդակների սուր կողմը ուժգին վրայ բերում ամեհի նժոյգի փորատակին, որը փրփրադէզ քթածակերից մռնչոցը երկինք բարձրացրած՝ սլանում էր դէպի ապարանքը։ Բայց չափից դուրս արագ ընթացքը սպառեց երիվարի յոյժերը և ընչասպառ թաւալեց գետին։ Ցատկեց նրա վրայից Նուռու-Գիւզալը և ոտով վազեց դէպի ապարանքը, ամուր զանգահարեց երեք անգամ և սրտատրոփ թագ-

նուեցաւ սանդուղքների տակ։

Այդ րոպէին Եաշի-Ֆիդանը և Զնաշխարհիկը գտնուում էին սիրոյ աշխարհում և վայելում նրա բարիքները։ Զանգակի ձայնը սթափեցրեց Զնաշխարհիկին, որ ոտի ելնելով ասաց. «Այս րոպէիս կըվերադառնամ, Եաշի-Ֆիդանս, տեսնեմ, ո՞վ էր իմ զանգակի թելերին դիպչողը» և դուրս գալով՝ սկսեց սանդուղքներից ցած իջնել, սակայն դեռ հազիւ էր կէս արել աստիճանները, երբ կատաղի վագրի նման թռաւ նրա ուսերին Նուռու-Գիւզալը, թեր փաթաթեց նրա երկար մազերով՝ շոքեցրեց իր ձախ ոտը գետին մխելով և աջ ծունկը նրա ուսերին սղմած՝ զոյգ ձեռներով սկսեց ձգել մազերը և գոչել. «Եղբայրս, եղբայրս քեզանից կըպահանջեմ»։

— Ո՞վ, ի սէր Աստուծոյ, ի սէր քո եղբօր, մի րոպէ, վայրկեան հանգիստ, չունչս առնեմ, և քո եղբայրդ մօտիդ կանգնած կըտեսնես, կանչում էր Զնաշխարհիկը նուազած ձայնով։

Սակայն նրա թոյլ ձայնը չէր լսում Նուռու-Գիւզալը։ Աչքերը արիւնը կոխած, ջղային ցնցումով՝ որքան որ ոյժը պատել կարող էր, ձգում էր նա անընդհատ Զնաշխարհիկի մազերը՝ կրկնելով. «Եղբայրս, եղբայրս քեզանից կըպահանջեմ»։

Այս աղմուկին դուրս եկաւ Եաշի-Ֆիդանը։ Տեսնելով Զնաշխարհիկին չոքած, որ մարած աչքերն երկինք էր ուղղել, և նրա ուսերի վրայ Նուռու-Գիւզալին, որպէս մի արծիւ իր որսի վրայ իջած, նա այլայլեցաւ և կանչեց. «Նուռու-Գիւզալ, այդ ի՞նչ ես անում»...

Եաշի-Ֆիդանի ազատարար ձայնը հնչելուն պէս, Նուռու-Գիւզալն էլ չիմացաւ, թէ ինչպէս իր ձեռներից քանդուեց Զնաշխարհիկի հիւսերը և ինչպէս ինքը փա-

թաթուեց եղբօր վզովը։ Նա անչափ ուրախութիւնից իր արցունքներով թրջում էր եղբօր գեղեցիկ մազերը, ջերմաջերմ համբոյրներ դրօշմում նրա ճակատին և մըրմնջում. «Ո՜հ, եղբայր իմ, եղբայր իմ»։

— Դու ի՞նչպէս եկար այստեղ... հարցրեց շփոթուած Եաշի-Ֆիդանը։

— Քո ձիով, պատասխանեց Նուռու-Գիւզալը։

— Իմ ձիո՞վ... մի՞թէ իմ ձին փախել է։

— Հապա՞... չգիտե՞ս. ահա եօթն օր է, որ ես նրանով ճանապարհ եմ գալիս։

— Եօթն օր... զարմացած մտածում էր Եաշի-Ֆիդանը. մի՞թէ մի ժամից աւելի է անցել այն րոպէից, երբ նա թեւ թեւի տուած Զնաշխարհիկի հետ բարձրացաւ սանդուղքներից վեր։

— Ո՜հ, եղբայր իմ, պէտք է շտապենք, եթէ չենք ուզում մեր ծերունի ծնողներին գերեզման իջեցնել, կամ աչքի լուսից զրկել, ասաց Նուռու-Գիւզալը։

Զնաշխարհիկը, որ մինչև այդ րոպէն սաստիկ ցաւը մոռացած դիտում էր սրտաճմլիկ տեսարանը և ինքն իրան զարմանում, մտածելով թէ՝ մի՞թէ հողեղէն արարածների մէջ էլ կարող են լինել այդպիսի վեհ և անարատ սիրող սրտեր, մօտեցաւ նրանց ասելով. «Դուք անհոգ եղէք. վաղը առաւօտեան մենք կըլինենք ձեր ծնողների մօտ». — ապա աջ թեւը ձգած Եաշի-Ֆիդանի ուսը և ձախը Նուռու-Գիւզալի, բարձրացրեց նրանց սանդուղքներից վեր։

Երբ գիշերային ժամուն Նուռու-Գիւզալը իր անգին կորուստը գտնելուց յետ՝ յոգնած ու դաղրած աչքերը խփեց հանգիստ առնելու և նրա օրինակին հետևեց Եաշի-Ֆիդանը, Զնաշխարհիկն եղունգին նայեց՝ և յան-

կարծակի նրա առաջ կանգնեցին եօթ ահռելի գևեր։ Նրանք խորը գլուխ տին Զնաշխարհիկին և ասացին միաբերան. «Ի՞նչ ես կամենում, տիրուհի, աշխարհը քանդե՞լ, թէ՝ շինել»։

—Ոչ քանդել և ոչ շինել, պատասխանեց Զնաշխարհիկը, — այս գիշեր ապարանքս ամբողջովին կըվերցնէք այնպէս, որ ոչ մի կոշտ հող չըպակուի նրանից և կըտանէք այս ինչ Ջրաղացի առաջին կըդնէք։

—Պատրաստ ենք, գլուխները խոնարհեցնելով միաբերան կանչեցին գևերը և անհետացան։

Ադամայ մուրճն է։ Երկնքի անթիւ ու անհամար աստղերը այդ խորին մթութիւնը փարատելու համար իրանց վերջին ճիգն թափելուց յետոյ՝ հետզհետէ յետ են քաշւում և տեղի տալիս լուսապայծառ արեգակին, որ իր նշանը տուել է արդէն աղօթարանում։ Կամայ ակամայ արևելքը շառագունում է։ Դեռ թռչունները չեն զարթնել և չեն սկսել իրանց բարիլուսի նախերգանքը։ Ջրաղացի դուռը ճռռալով բացւում է և պառաւ Ջրաղացպանուհին ճուրուրալով ոտը փոխում է չէմքից դուրս. նրա աղօթքի սովորական ժամն է։ Յանկարծ նա վախեցած յետ յետ գնալով վերև է նայում։ Նորից ներս է մտնում Ջրաղացը՝ կանչելով ծերին.

—Այ մարդ, դուրս արի՛ տես՝ թէ ի՞նչ է մեր դռանը. սար է, թէ՞ ամպ է շոքել։

Ցքտքալով հետևում է ծերը պառաւին, գլուխը դուրս հանում դռնից, մեծ զարմանքով դիտում շուրջը և իր դատողութիւնը տալիս.

—Այ կնիկ, էս տեսակ ամպ չի լինի... իմ աչքերս էլ խառնուել են այս երկ-օրը, լաւ չեմ կարողանում ջոկել։ Թող մէկ լոյսը բացւի, տեսնենք Աստուած ի՞նչ է

կամեցել։

Նրանք ներս են գնում և այնտեղ կատարում իրանց լուսածէգի աղօթքը։

Այդ միջոցին արթնացաւ Եաշի-Փիդանը, դուրս եկաւ պատշգամբ և տեսնելով իր առաջին իրանց Ջրաղացը՝ սրտապատառ վազեց ներքև սանդուղքներից և ներս ընկաւ պապի ու տատի մօտ։ Այստեղ արդէն մարդու լեզու չի պտտի, որ պատմէ, թէ ծերը և պառաւը ինչպիսի ցնծութեամբ ընդունեցին նրան և նրա ընկերակցուհիներին։ Նրանք ուրախութիւնից թռչկոտում էին մանուկների նման և նստած տեղերը անհանգիստ շարժումներ անում։

Եաշի-Փիդանը էլի սկսեց իր այցելութիւնները թագաւորին։

Մի օր Զնաշխարհիկն ասաց նրան. «Եաշի-Փիդան, դու որ գնում ես թագաւորի մօտ, ճանապարհին քեզ ոչինչ չի՞ պատահում»։

—Հա, Զնաշխարհիկս, եօթը ճանապարհների միացման տեղը մի կին է թաղած մինչև ծծերը. ամեն անց ու դարձ անող մօտենում է նրան, երեսին թքում և մօտը մի քար ձգում, որից ահագին բլուր է գոյացել։

—Դու էլ այդպէս ես անում։

—Ի՞նչպէս չանեմ, թագաւորի պատուէրն է, եթէ չըկատարեմ, այնտեղ կանգնեցրած պահապանը իսկոյն կըյայտնէ թագաւորին իմ անհնազանդութեան մասին։

—Վնաս չունի, թէ դրա մասին կըհաղորդէ պահապանը թագաւորին. այս անգամն որ կըգնաս, մի ծաղկեայ փունջ չինիր, մօտեցիր այն կնոջը, երեք անգամ երկրպագիր նրան և քո ձեռքով կապած ծաղկեայ փունջը նրա կրծքին դիր։ Իսկ երբ հարցուփորձ կանէ

քեզ Թագաւորը այդ մասին, պատասխանիր. «Ես չեմ կարող այդ դէմքի վրայ Թքել, որ Աստուծոյ պատկեր է կրում»։

Եաշի-Ֆիդանը ճշտութեամբ կատարեց Հնաշխարհիկի առաջարկը։ Երբ Թագաւորը լսեց նրա արարմունքը, տխրութեամբ հարցրեց նրան. «Եաշի-Ֆիդան, ինչո՞ւ հակառակ գնացիր իմ պատուէրին»։

—Տէր իմ, ես չեմ կարող Թքել այն դէմքի վրայ, որ Աստուծոյ պատկեր է կրում, պատասխանեց Եաշի-Ֆիդանը։

—Լաւ, եթէ այդպէս է, ճանապարհդ փոխիր և ուրիշ ճանապարհով եկ։

Երկրորդ օրը Հնաշխարհիկն ասաց. «Եաշի-Ֆիդան, դու որ ամեն օր գնում ես Թագաւորին այցելութեան և միշտ պատիւ ստանում նրանից, ապա հարկ չէ՞, որ մի օր էլ դու նրան հրաւիրես մեզ մօտ՝ հիւրասիրելու։

—Ուղիղ որ, Հնաշխարհիկս, ես էլ այդ էի ցանկանում. հէնց վաղը կառաջարկեմ նրան մեզ մօտ գալու։

Հետևեալ առաւօտը նախաճաշից յետոյ Եաշի-Ֆիդանը ասաց Թագաւորին. «Տէր արքայ, խնդրեմ այսօր ճաշին ձեր ամբողջ շքախմբով շնորհ բերէք իմ մօտ»։

—Շնորհակալ եմ, Եաշի-Ֆիդանս, ինքնաբաւական ժպիտն երեսին պատասխանեց Թագաւորը մտածելով. — զարմանալի է, մի ջրաղացպանի որդի ուզում է ինձ հիւրասիրել։ Սակայն չկարողացաւ չզիջանել Եաշի-Ֆիդանի Թախանձանքներին և յանձն առաւ ճաշին նրա մօտ գնալ իր բոլոր արքունականներով։

Թագաւորը շրջապատուած իր վեզիր նէզիրով և բազմաթիւ հեծելազօրով՝ դիմաւորեց դէպի ջրաղաց։ Նա մտածում էր, թէ՝ ահա կերևայ ցեխով ծեփրտած

ջրաղացը, որի մէջ ինքը չի կարող մտնել, այլ պէտք է նրա շուրջը տարածուող գեղածիծաղ մարգագետնում մի քէֆ սարքէ, ուրախութիւն անէ և այդպիսով Եաշի-Ֆիդանի սիրտը չվիրաւորէ։ Բայց անչափ զարմացաւ, երբ իր առաջ տեսաւ մի այնպիսի ապարանք, որի մօտ իր պալատը միայն խոհանոցի տեղ կարող էր ծառայել։ Նրա զարմանքը կրկնապատկուեցաւ, եռապատկուեցաւ այն ժամանակ, երբ սկսեց մարմարեայ սանդուղքներից բարձրանալ ապարանքի վերին յարկը, երբ ճաշին բազմատեսակ կերակուրները բերեցին ոսկեայ ափսէներով. ոսկուց էին նոյնպէս բոլոր իրեղէնները՝ թէ մատուցարան և թէ դանակ, պատառաքաղ, դգալ։ Ճաշը վերջանալուն պէս՝ Հնաշխարհիկի պատուիրելով Եաշի-Ֆիդանը առաջարկեց բոլոր հիւրերին՝ վերցնելու իւրաքանչիւրը որպէս ընծայ իր առաջն եկած բոլոր ոսկեայ ամանեղէնները։ Թագաւորից սկսած բոլոր հիւրերը խոյն հաւաքեցին իրանց առաջին թափուած՝ ափսէները, դանակը, պատառաքաղը և դգալը և սկսեցին պահպրհել ծոցերում ու գրպաններում։ Սրանից յետոյ Հնաշխարհիկը կանչեց Եաշի-Ֆիդանին բաց արեց իր գաղտնարան սնդուկը, հանեց նրա միջից մի արծաթէ ափսէի մէջ դրած ոսկուց չինած աքաղաղ, որի առաջ թափուած էր ոսկեայ հատիկներ և ասաց. «Կրտանես այս աքաղաղը, կընդնես Թագաւորի առաջին և կասես. «ոսկի աքաղաղ, ինչո՞ւ չես ուտում քո առաջին թափուած հատիկները». երբ Թագաւորը կըհարցնէ քեզ, թէ ինչպէս կարող է ոսկի աքաղաղը ոսկեայ հատիկներ ուտել, դու պատասխանիր. եթէ ոսկի աքաղաղը չի կարող ոսկեայ հատիկներ ուտել, հապա ինչպէս կինը կարող է չան լակոտ ծնել։ Ցետոյ կըյայտնես այն, ինչ

որ գիտես»։ Ձնաշխարհիկը արդէն մանրամասնօրէն պատմել էր Եաշի-Ֆիդանին և Նուռու-Գիւզալին իրանց ով լինելը և ինչ բախտի բերմամբ ջրաղաց ընկնելը։ Եաշի-Ֆիդանը վերցրեց ոսկի աքաղաղը, տարաւ դրեց Թագաւորի առաջը և ասաց բոլոր հանդիսականների ներկայութեամբ. «Ոսկի աքաղաղ, ինչո՞ւ չես ուտում առաջիդ թափւած ոսկեայ հատիկները»։ Թագաւորը ձայն չհանեց, այլ միայն դիտում էր հիացմամբ գեղեցիկ իրը։ Եաշի-Ֆիդանը կրկնեց իր առաջարկը ոսկի աքաղաղին։ Թագաւորը լուռ էր։

— Ոսկի աքաղաղ, ինչո՞ւ չես ուտում քո առաջին թափւած ոսկեայ հատիկները, մի՞թէ չես տեսնում, նորոգեց իր հարցը Եաշի-Ֆիդանը։

— Եաշի-Ֆիդանս, այդ ի՞նչ ես ասում, ի՞նչպէս կարող է ոսկուց շինած աքաղաղը ոսկի հատիկներ ուտել, խօսեց Թագաւորը։

—Ի՞նչպէս. եթէ ոսկի աքաղաղը չի կարող ոսկէ հատիկներ ուտել, հապա ի՞նչպէս կինը կարող է շան լակոտ ծնել, պատասխանեց Եաշի-Ֆիդանը։

— Ի՞նչ են նշանակում այդ խօսքերը, սարսափած դոչեց Թագաւորը։

—Այն, որ դու չարաչար խաբւած ես.—այն շան լակոտի, որին իսկական նորածին մանուկը կարծելով առաջին անգամ կորցնել տւիր, փոխարէնը ես եմ, իսկ երկրորդ անգամ այն շան լակոտը, որ կորցրիր և մօրս երկար ու ձիգ տարիների ընթացքում այնպէս անգթաբար պատժեցիր, փոխարէնն է այս գեղանի օրիորդի, ասաց Եաշի-Ֆիդանը Նուռու-Գիւզալի ձեռնից բռնելով և առաջ քաշելով նրան Թագաւորի մօտ, որ ինքն իր դլուխը կորցրած չէր կարողանում հասկանալ, թէ արդեօք այդ բոլորը իրականութիւն է, թէ՝ երազի մէջն է տեսնում միայն։

Մինչ Թագաւորը այդպէս շշմած՝ չէր իմանում իր անելիքը և արքունականները շփոթւած՝ զարմանում էին թէ արդեօք ինչ պատահեց Թագաւորին, ինչո՞ւ այդպէս այլայլւեց նա և ինչ էին նշանակում Եաշի-Ֆիդանի խօսքերը, Եաշի-Ֆիդանը պատմեց նրանց մի առ մի ջրաֆէրէ պառաւի գործ դրած խարդախութիւնները՝ վէզիրի և նէզիրի կանանց դրդմամբ։

Իսկոյն հնչեցին ուրախութեան փողերը։ Արքունական կառքերը շրջապատեցին արհամարւած կնոջը. մի րոպէում ամբողջ արհամարական քարէ բլուրը քանդւեց, անհետացաւ գետնի երեսից։ Նիհարած ու մաշւած Թագուհուն նստեցրին ամենափառաւոր կառքում, տարան բաղանիք, մաքրեցին նրա վրայից երկար տարիների ընթացքում փոշուց գոյացած կեղտը և հագցրին իր նախկին շորերը։

Թագաւորը հրամայեց սկսել Եաշի-Ֆիդանի և Ձնաշխարհիկի հարսանիքը, որն եօթն օր և եօթ գիշեր տևեց։ Հարսանիքից յետոյ Թագաւորը հրաժարւեց գահից և իր տեղը Եաշի-Ֆիդանին բարձրացրեց։ Իսկ պառաւ ջրաֆէրէի տունները կապել տւեց մի ջորու պոչից, Թագուհու մեծ քոյրերի՝ վէզիրի և նէզիրի կանանց տունները մի մի ուղտի պոչից և գետնի երեսով քաշէ-քաշ քաղաքի շորս կողմը այնքան պտըտցնել տւեց, որ նրանց մարմնի վրայ սաղ կտորը՝ ականջը մնաց։

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

1. ԴՈՕԳԻՆԷՍ (սակաւաթիւ) . . . . . 25 կ.
2. ԵԱՀԻ-ՖԻԴԱՆ և ՆՈՒՌՈՒ ԳԻՒՂԱՂ. . . . 10 կ.

Դիմել՝ Ալէքսանդրապոլ տպարան
պ. Գ. Սանոյեանցի

ԳԻՆՆ Է 10 Կ.